ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելը պայմանավորված է փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում ապրանքների արտահանման գործընթացը պարզեցնելու անհրաժեշտությամբ:

2. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախագծով նախատեսվում է հնարավորություն ընձեռել տնտեսվարող սուբյեկտներին՝ չվճարել մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ -ից արտահանվող, ընդհանուր մաքսային արժեքը 1.0 մլն ՀՀ դրամ եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքների համար գանձվող մաքսավճարները, ինչպես նաև նշված փոփոխությունը ուղղված է մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցմանը:

Առաջարկվող փոփոխությունն ուղղված է մրցակցային միջավայրի բարելավմանը, մասնավորապես՝ վերոնշյալ իրավական կարգավորման շրջանակներում տնտեսվարողների ցածր արժողություն ունեցող ապրանքների արտահանման դեպքում վերջիններս ազատվում են պետական տուրքի վճարման պարտականությունից, ինչն էլ կհանգեցնի նշված շուկաներում մատակարարների քանակի ավելացմանը:

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է դրական ազդեցություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կնպաստեն մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցմանը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ֆինանսական և վարչարարական ծախսերի կրճատմանը:

3. ՏՎՅԱԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայումս իրականացվող մաքսային քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում սահմանային անվտանգության ապահովմանը, գործարար միջավայրի բարելավմանը և ներդրումների խրախուսմանը, մաքսային ընթացակարգերի հստակեցմանը և պարզեցմանը:

4. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Նախագծով առաջարկվող լրացումն ուղղված է մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցմանը և դյուրինացմանը, ինչպես նաև դրա համար պահանջվող ծախսերի կրճատմանը:

5. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

6. ԿԱՊԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը բխում է ռազմավարական փաստաթղթերից, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի «6.9 Հարկային և մաքսային վարչարարություն» բաժնի դրույթներից:

7. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԵԹԵ ԱՅԴՊԻՍԻՔ ԱՌԿԱ ԵՆ)

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2019 թվականին մինչև 107588[1] ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը (ըստ ապրանքային հայտարագրերի) կազմել է 2105 գործարք, որոնցից գանձվել է 9.8 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք, իսկ 107588 դրամից մինչև 1.0 մլն ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը կազմել է 1988 գործարք, որոնցից գանձվել է 27.6 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք:

Նույն ժամանակահատվածում մինչև 107588 ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը (ըստ տարանցման հայտարագրերի) կազմել է 140 գործարք, որոնցից գանձվել է 0.85 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք, իսկ 107588 դրամից մինչև 1.0 մլն ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը կազմել է 5193 գործարք, որոնցից գանձվել է 67.97 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք:

Հարկ է նշել նաև, որ 2020 թվականին մինչև 107588 ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը (ըստ ապրանքային հայտարագրերի) կազմել է 3398 գործարք, որոնցից գանձվել է 10.2 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք, իսկ 107588 դրամից մինչև 1.0 մլն ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը կազմել է 2622 գործարք, որոնցից գանձվել է 18.6 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք:

Նույն ժամանակահատվածում մինչև 107588 ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը (ըստ տարանցման հայտարագրերի) կազմել է 623 գործարք, որոնցից գանձվել է 5.06 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք, իսկ 107588 դրամից մինչև 1.0 մլն ՀՀ դրամ մաքսային արժեք ունեցող արտահանման գործարքների թիվը կազմել է 6059 գործարք, որոնցից գանձվել է 72.61 մլն ՀՀ դրամի չափով պետական տուրք:

Հաշվի առնելով 2019 և 2020 թվականների վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը, կարելի է եզրահանգել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է պետական բյուջեում եկամուտների նվազեցում միջինում 106.35 մլն դրամի չափով:

---

[1] Ընդունվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվարկված եվրոյի միջին շուկայական փոխարժեքը՝ 2019թ. ՝ 537. 94 ՀՀ դրամ, 2020թ. ՝ 558. 39 ՀՀ դրամ: